ՈՂՋՈՒՅՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ, ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՐՅՆԵՐ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Հայրենաբաղձ կարոտների կարավաններն ուսած մեր քույրերի և եղբայրների ողջույններով և նրանց ձեզ բարի երթի որոտալից բացականչություններով շտապում եք Հայրենիք, շտապում Մայր Արաքսից մի կաթիլ ջուր ըմպելու, հայրենի հողը համբուրելու և նրա սիզապանծ լեռների ու դաշտավայրերի գեղեցկության հմայքները շնչելու:

Եվ ահա տեսնում եմ դեպի Հայրենիք սևեռած բազմահազար ժողովրդի կարոտալի հայացքները, լսում եմ նրանց ողջույնների որոտները, կեցցեների տարափը, տեսնում եմ նրանց հույսերով ու ակնկալություններով լի թռիչքները, որոնք հեռավոր հորիզոնները կտրելով ցնծության և երկրպագանքի հեղեղներ են թափում Մասիսի և Արագածի դեղավարս լանջերին:

Գալիս եք և դուք, ո՛վ մեր երկրի լուսավոր կյանքը կերտողներ, մեր մաքառումների և հաղթանակների մարտավար հերոսներ, գալիս եք ձեր իսկ ձեռքով կերտած, ձեր քրտինքներով ցողած հրաշակերտների փառքը բազմապատկելու, մեր պայքարների հաղթությունը տոնելու, գալիս եք ձեր հեռավոր քույրերի և եղբայրների ներկայացուցիչների հետ դրկախառնվելու, նրանց հոգու խորքերից բխող հայրենական սիրո կարոտների և խանդավառության երգեր լսելու:

Ահա մեր երկրի մեծ, դեղածիծաղ երկնակամարում հավերժության թևերի վրա հավերժորեն սավառնում է մեր սիրո, մեր միասնության անմահական ոգին, և հայրենի հողերը ցնծության մարգագետինները կրծքներին՝ ողջույնի ծաղիկներ են փռում ձեր ճանապարհներին ու երգում են միասնության և համերաշխության վսեմ չարականները:

Ցնծում է մեր Հայրենիքը և բաց է անում ձեր առաջ իր ոսկյա դարպասները:

Բարի գալուստ, բարի ողջույն, լսվում են չորս կողմից և ձեր հանդիսավոր երթը մինչև Մայր Աթոռ զարդարվում է անկեղծության ծաղիկներով ու փառքով:

Բարի գալուստ, բարի ողջույն, թնդում է Հայրապետական գահը, Մայր Տաճարի հինավուրց գմբեթները սկսում են ղողանջել բարի գալստի հզոր երգերը, որոնք օդի ալիքները պատռելով սլանում են դեպի Արագածի ստորոտները Օշականին աչքալուսանքի համբույրները տալու:

Դուք օտար հորիզոնների մեր եղբայրներ և հայրենակիցներ, դուք գալիս եք ուրախ և հաղթական և ճանապարհին ձեր դարչապարների տակ ընկած են դարերի ախուր հուշերը, մեր պատմության մռայլ էջերը, մեր դառն անցյալի արհավիրքներն ու կսկիծները:

Մենք դարերի բռնությունն ու խավարը մոխիր դարձրինք և ոչնչացման անդունդը նետեցինք 25 տարի առաջ, այն երջանիկ և բերկրալից օրերին, երբ ծագեց համայն մարդկության ազատության արշալույսը և Նոյեմբերյան առավոտը Հայաստանի դաշտերն ու լեռները զարդարեց նոր արևներով ու գարուններով:

Եկեք, եկեք, մեր նոր Հայրենիքի փառքը տեսնելու, եկեք խնդալու և ոգևորվելու:

Եկեք լսելու մեր պատմության, մեր վերածնության կախարդիչ հեքիաթը, որ մեր ժողովրդի զարթոնքի ու նրա նորօրյա կյանքի վսեմ պատումն է:

Մտեք մեր նոր պատմության ոսկե դռներով, բարձրացեք ազատության սեղանը,

որպեսզի մեր նոր դարաշրջանի, մեր նոր կյանքի հաղթանակները տեսնեք:

Կտեսնեք և հրճվանքով կբարախեն ձեր սրտերը:

Եկեք, եկեք, բարի՛ գալուստ... մեծ է և պատմական ձեր պարտավորությունը և գործը: Այդ վսեմ պարտավորությունն է ձեզ բերել այստեղ:

Աղգային միասնության ոգին է ձեզ առաջնորդել դեպի մեր մշտածիծաղ, լուսավոր հորիզոնները, ուր ազատության և եղբայրության դրոշներն են փողփողում, ուր աշխատանքն ու երջանիկ կյանքը այլևս բաղձանք ու տենչանք չեն, այլ տեսանելի իրականություն:

Բաց են մեր գրկները, պայծառ ու զվարթ մեր ճակատները:

Եկե՛ք, եկե՛ք...

Ձեր առաջով հպարտ ու վեհ կանցնի մեր նոր ռազմաթափը ու բարձունքից մեր հեքիաթային երկրի զանգակները կզոդանջեն և կերգեն ձեզ մեր հաղթանակների հավերժական երգերը:

Եվ երբ այդպիսի առաջին լույսերը թափանցեն ձեր լուսամուտներից, ձեզ կողջունեն մեր բազմաթիվ գործարանների չչակները աշխատանքի և հաղթանակի ոգու գալուստը ավետելով:

Բարի՛ գալուստ, բարի՛ գալուստ...

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ